«ՆՈՏԱՐԻԱՏԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

««ՆՈՏԱՐԻԱՏԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

Հոդված 1. «Նոտարիատի մասին Հայաստանի Հանրապետության 2001 թվականի դեկտեմբերի 4-ի ՀՕ-274-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածը լրացնել նոր 4-րդ մասով հետևյալ բովանդակությամբ՝

«4. Եթե որակավորման ստուգում անցկացնելու մասին հայտարարություն տրվել է նոտարական տարածքի և նստավայրի նշմամբ, ապա նշանակված նոտարը կարող է տեղափոխվել այլ նոտարական տարածք՝ մարզ՝ առնվազն 3 տարի, Երևան քաղաք՝ առնվազն 5 տարի նոտարական գործունեություն իրականացնելուց հետո։»:

Հոդված 2. Օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«3. Նոտարի պաշտոնում նշանակումները կատարում է արդարադատության նախարարը՝ հաշվի առնելով նոտարական պալատի եզրակացությունը, որը պետք է լինի պատճառաբանված և հիմնավորված։

Նոտարի պաշտոնում նշանակում կատարելիս արդարադատության նախարարը առաջնահերթությունը տալիս է որակավորման վկայական ունեցող այն անձին, ով անցել է հստակ նոտարական տարածքի նշմամբ հայտարարված որակավորման ստուգում։

Պաշտոնում նշանակելուց հետո արդարադատության նախարարությունը նոտարին տալիս է ծառայողական վկայական։»:

Հոդված 3. Օրենքի 11-րդ հոդվածը՝

- լրացնել նոր 2.1-րդ մասով հետևյալ բովանդակությամբ՝

«2.1. Որակավորման ստուգում անցկացնելու մասին հայտարարությունը կարող է տրվել առանց նոտարական տարածքի և նստավայրի նշման՝ բոլոր նոտարական տարածքներում թափուր հաստիքները լրացնելու համար կամ նոտարական տարածքի և նստավայրի նշմամբ՝ այդ նոտարական տարածքում առկա թափուր հաստիքները լրացնելու համար.

- լրացնել նոր 3.1-րդ մասով հետևյալ բովանդակությամբ՝

«3.1.Եթե որակավորման ստուգում անցկացնելու մասին հայտարարություն տրվել է նոտարական տարածքի և նստավայրի նշմամբ, ապա որակավորման վկայական ստացած անձը հաղթող ճանաչվելու դեպքում նշանակվում է հայտարարության մեջ նշված նոտարական տարածքում և նստավայրում։»:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից երեք ամիս հետո: